ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, վերջերս համալրվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմը, գրականագետ Գրիգոր Հակոբյանին հրավիրելով իբրև մնայուն անդամ։ Հուլիսի 2-ին պր. Գրիգոր Հակոբյանը մասնակցեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստին։

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, հատենի ժողովո, պր. Գրիգոր Հակոբյանի ներկայությունը և մասնակցությունը նիստին ջերմորեն ողջունեցին Վեհափառ Հայրապետը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյանը և ճարտարապետ Միքայել Մազմանյանը։

Վեհափառ Հայրապետը, ցանկանալով նաև «Էջմիածին» ամսագրի աշխատանքներին ներգրավել մտավորական նոր ուժեր, մնայուն հանգամանքով որպես խորհրդատու և գործակից գլխավոր խմբագրին, հանձնարարեց կազմել խմբագրական մարմին։

Վեհափառ Հայրապետի թելադրությամբ կազմվեց «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը հետևյալ կազմով.

1. Պրոֆ. Առաքել Առաքելյան, անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի և դասախոս Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի.

2. Սարգիս Մելիքսեթյան, դիրեկտոր Երևանի գրականության և արվեստի թանգարանի.

3. Արթուն Հատիտյան, ամսագրի գլխավոր խմբագիր և դասախոս Հոգևոր Ճեմարանի.

4. Վահան ծայրագույն վարդապետ Տերյան, Այրարատյան թեմի հայրապետական փոխանորդ, միաբան Մայր Աթոռի.

5. Արսեն վարդապետ Բերբերյան, միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և դավաղանակիր Վեհափառ Հայրապետի.

6. Սուրեն Քոլանջյան, ավագ գիտաշխատող Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց մատենադարանի։

«Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը իր լրիվ կազմով հուլիսի 15-ին ներկա եղավ Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստին։

Վեհափառ Հայրապետը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և ճարտարապետ Միքայել Մազմանյանը, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, ջերմորեն ողջունեցին խմբագրական մարմնի կազմությունը և նրա ներկայությունը նիստին հաջողության, շնորհավորության սրտագին բարեմաղթություններով։

Գլխավոր խմբագիր Ա. Հատիտյանը և խմբագրական մարմնի անդամ Ս. Մելիքսեթյանը, հանուն խմբագրական մարմնի, շնորհակալության պատասխան խոսք ասացին։

* *
*

Հուլիսի 5-ին, կիրակի, Վարդավառ, «Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և քարոզեց «Ես յայլակերպս եղև առաջի նոցա» Փրկչի պայծառակերպության մեծ դեպքին նվիրված խորհրդածություններով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *
*

Հուլիսի 6-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ննջեցելոց»։

* *
*

Հուլիսի 6-ին, երկուշաբթի, կեսօրից հետո Մայր Տաճար այցելեցին Պարսկաստանում Նորվեգիայի դեսպանը իր հարգելի տիկնոջ և աղջկա հետ, ինչպես նաև հայտնի վիրաբույժ պրոֆ.-դոկտ. Բարակովսկին։

* *
*

Հուլիսի 12-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը և քարոզեց «Քև պարծի այսօր Ս. Եկեղեցի, ով վկայուհի Ս. Սանդուխտ» շարականի խոսքերով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *
*

Հուլիսի 12-ին, կիրակի, կեսօրից հետո Մայր Տաճար այցելեց Մոսկվայում Կուբայի դեսպան Կարլոս Օլիվարես-Սանչեսը իր հարգելի տիկնոջ և դստեր հետ։

* *
*

Հուլիսի 15-ին, շաբաթ օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին ուխտավորաբար Մայր Հայրենիքում գտնվող հայ առաջադիմական միության նախագահ պր. Վահան Ղազարյանը ԱՄՆ-ից և Լիբանանի «Սփյուռք» շաբաթաթերթի արտոնատեր պր. Նշան Խոշաֆյանը։

Մայր Տաճարում իրենց ուխտը կատարելուց հետո, հյուրերը ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։

Նորին Ս. Օծությունը զրույց ունեցավ և՛ պր. Վահան Ղազարյանի և՛ պր. Նշան Խոշաֆյանի հետ Սփյուռքի ազգային-եկեղեցական հարցերի շուրջ։

* *
*

Հուլիսի 15-ին, շաբաթ օրը, կեսօրից հետո Մայր Տաճար այցելեցին Լեհաստանի տուրիզմի նախագահը իր հարգելի տիկնոջ հետ, ինչպես նաև Մոսկվայում սովորող մի խումբ լիբանանցի ուսանողներ, սովետական գրականության արաբերենի թարգմանիչ տեր և տիկին Թավիլի գլխավորությամբ։

Վերջիններս ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։

* *
*

Հուլիսի 15-ին, շաբաթ օրը, Մայր Աթոռ ժամանեց Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Պարգև սրբազանը մեկնեց հովվական այցելության դեպի Հյուսիսային Կովկաս՝ Օրջոնիկիձե, Արմավիր, Ղզլար, Պրիկումսկ, Ռոստով, Մեծ Սալա և Զալդր։

Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ և Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը կուղեկցի Պարգև սրբազանին իր հովվական այցելության ժամանակ։

* *
*

Հուլիսի 16-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցին, մոտիկից դիտելու եկեղեցուց ներս կատարվող նկարազարդումների (ֆրեսկոյի) աշխատանքները։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, ճարտարապետներ Միքայել Մազմանյանը, Վարազդատ Հարությունյանը, Դաֆֆի Իսրայելյանը, Կոնստանդին Հովհաննիսյանը, Բաղտիկ Արզումանյանը, Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը։

Վեհափառ Հայրապետը, նկարիչ Մարտիրոս Սարյանը և Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը տեղում դիտելուց հետո նկարչական բարեհաջող աշխատանքները, արեցին մի շարք դիտողություններ և թելադրություններ։

* * *

Հուլիսի 16-ին, հինգշաբթի, երեկոյան Մայր Տաճար այցելեց լեհ կինոդերասանների մի խումբ։ Հարգելի հյուրերը ընդունվեցին նաև Վեհափառ Հայրապետի կողմից։

* * *

Հուլիսի 17-ին, ուրբաթ, Հոգևոր Ճեմարանի ուսանողները միօրյա զբոսաշրջիկի գնացին դեպի Արագած և Ամբերդ։

* * *

Հուլիսի 18-ին, շաբաթ, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն արժանապատիվ Տ. Հայկազուն ավագ քահանա Ոսկերչյանի մահվան տարելիցի առթիվ։

Հոգեհանգստյան արարողության նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

Խոսեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, վեր հանելով հանգուցյալի հոգևոր, կրթական և ազգային գործունեությունը։

* * *

Հուլիսի 19-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը և քարոզեց։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Հուլիսի 20-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 8-ին, դեպի Կիսլովոդսկ մեկնեց Վեհափառ Հայրապետը, մի ամսով հանգստանալու համար։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում է հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը։

* * *

Հուլիսի 26-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և քարոզեց «Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս պարտ է բարձրանալ Որդւոյ Մարդոյ» բնաբանով։